ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐՆԱԳԻՐ **Medical Financial Assistance**	ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ **NATL.CB.307**
ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ **National Community Health**	ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎԸ **1 հունվարի 2023թ**
ՓԱՍՏԱԹՂԹԻ ՏԵՐԸ **Տնօրեն, Բժշկական ֆինանսական օգնություն**	ԷՋ **1-ը՝ 30-ից**

1.0 Քաղաքականության հիմնավորում

Kaiser Foundation Health Plans (KFHP) և Kaiser Foundation Hospitals (KFH) միտված են տրամադրելու ծրագրեր, որոնք նպաստում են խնամքի հասանելիությանը բնակչության խոցելի զանգվածի համար: Այս միտումը ներառում է ֆինանսական օգնությունն իրավասու ցածր եկամուտ ունեցող չապահովագրված կամ պակաս ապահովագրված հիվանդների համար, երբ ծառայությունների համար վճարելու ունակությունը խոչընդոտ է հանդիսանում շտապ օգնության և բժշկական տեսանկյունից անհրաժեշտ խնամք ստանալու համար:

2.0 Նպատակ

Այս քաղաքականությունը նկարագրում է Բժշկական ֆինանսական օգնության (Medical Financial Assistance, MFA) ծրագրի միջոցով շտապ օգնության և բժշկական տեսանկյունից անհրաժեշտ ծառայություններ ստանալու և որակավորվելու պահանջները: Պահանջները համապատասխանում են Միացյալ Նահանգների Ներքին եկամուտների օրենքի Բաժին 501(r)-ին և կիրառելի նահանգային կանոնակարգերին, որոնք վերաբերվում են իրավասու ծառայություններին, ինչպես ձեռք բերել մուտքի թույլտվություն, ծրագիր իրավասության չափանիշները, MFA-ի պարգևների կառուցվածքը, պարգևների գումարի հաշվարկման հիմքերը և բժշկական հաշիվների չվճարման դեպքում թույլատրելի գործողությունները:

3.0 Ոլորտ

3.1 Այս քաղաքականությունը վերաբերվում է այն աշխատակիցներին, ովքեր աշխատում են հետևյալ միավորներում և դրանց մասնաճյուղերում (միասնաբար կոչվում են «KFHP/H»)՝

- **3.1.1** Kaiser Foundation Health Plan, Inc.
- **3.1.2** Kaiser Foundation Hospitals, և
- **3.1.3** KFHP/H-ի մասնաճյուղեր:

3.2 Այս քաղաքականությունը վերաբերում է Kaiser Foundation Hospitals-ին և հիվանդանոցներին կից կլինիկաներին, որոնք թվարկված են *Kaiser Permanente տարածաշրջանների Հավելվածում, կցումներ 1-8*:

4.0 Սահմանումներ

Տե՛ս *Հավելված B՝ Տերմինների բառարան*:

Proprietary Information. Kaiser Permanente. All rights reserved.
Publication, duplication, disclosure or use for any purpose not expressly authorized in writing is prohibited.
Printed copies are for reference only. Please see electronic copy for latest approved version.

5.0 Դրույթներ

KFHP/H պահպանում է միջոցների հիման վրա փորձարկված MFA ծրագիր՝ մեղմացնելու իրավասու հիվանդների կողմից ֆինանսական խոչընդոտները շտապ օգնության և բժշկական տեսանկյունից անհրաժեշտ խնամք ստանալու համար՝ անկախ հիվանդի տարիքից, հաշմանդամությունից, սեռից, ռասայից, կրոնական պատկանելիությունից, սոցիալական կամ ներգաղթյալի կարգավիճակից, սեռական կողմնորոշումից, ազգային ծագումից, և արդյոք հիվանդն առողջապահական ապահովագրություն ունի:

5.1 Ծառայություններ, որոնք իրավասու են և իրավասու չեն՝ համաձայն MFA քաղաքականության:

5.1.1 Իրավասու ծառայություններ: MFA-ը կարող է կիրառվել որոշակի (1) շտապ օգնության և բժշկական տեսանկյունից անհրաժեշտ առողջապահական ծառայությունների, (2) դեղատան ծառայությունների և ապրանքների և (3) բժշկական պարագաների նկատմամբ, որոնք տրամադրվում են Kaiser Permanente (KP) հաստատություններում (օրինակ՝ հիվանդանոցներ, հիվանդանոցներին կից կլինիկաներ, բժշկական կենտրոններ և բժշկական գրասենյակներ), KFHP/H ամբուլատոր դեղատներում կամ KP մատակարարների կողմից, ինչպես նկարագրված է ստորև.

5.1.1.1 Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ ծառայություններ: KP մատակարարի կողմից տրամադրված խնամք, բուժում կամ ծառայություններ, որոնք անհրաժեշտ են բժշկական վիճակը կանխարգելելու, գնահատելու, ախտորոշելու կամ բուժելու համար, և որոնք հիմնականում նախատեսված չեն հիվանդի կամ բժշկական խնամքի մատակարարի հարմարության համար:

5.1.1.2 Դեղատոմսով դեղեր և դեղատան պարագաներ: Դեղատոմսով դեղերը, որոնք առկա են KFHP/H ամբուլատոր դեղատներում և տրամադրված են KP մատակարարների, ոչ-KP Շտապ օգնության բաժանմունքի մատակարարների, ոչ-KP Հրատապ խնամքի մատակարարների, KP-ի հետ պայմանագիր կնքած մատակարարների, Ատամնաբույժ-բժշկի (Doctor of Medicine in Dentistry, DMD) և ատամնաբույժ-վիրաբույժի (Doctor of Dental Surgery, DDS) կողմից:

5.1.1.2.1 Ոչ ապրանքանիշային դեղորայք: Ոչ ապրանքանիշային դեղորայքի օգտագործումը նախընտրելի է, երբ հնարավոր է:

5.1.1.2.2 Ապրանքանիշային դեղորայք: Ապրանքանիշային դեղորայքը, որը նշանակվել է KP մատակարարի

Proprietary Information. Kaiser Permanente. All rights reserved.
Publication, duplication, disclosure or use for any purpose not expressly authorized in writing is prohibited.
Printed copies are for reference only. Please see electronic copy for latest approved version.

կողմից, իրավասու է, եթե առկա է հետևյալից մեկը՝

5.1.1.2.2.1 Դեղատոմսի վրա նշված է «Տրամադրել ինչպես նշված է» (Dispense as Written, DAW) կամ

5.1.1.2.2.2 Ոչ ապրանքանիշային տարբերակը մատչելի չէ:

5.1.1.2.3 **Առանց դեղատոմսի վաճառվող դեղեր կամ պարագաներ:** Այս ապրանքներն իրավասու են, երբ.

5.1.1.2.3.1 KP մատակարարն է գրել դեղատոմսը կամ պատվերը:

5.1.1.2.3.2 Ապրանքը տրամադրվում է KP ամբուլատոր դեղատանը և

5.1.1.2.3.3 Ապրանքը մշտապես մատչելի է KP դեղատանը:

5.1.1.2.4 **Medicare-ի նպաստառուներ:** Վերաբերում է Medicare-ի նպաստառուներին Medicare-ի ՄԱս D միջոցով ապահովագրված դեղատոմսով դեղերի համար՝ դեղատան վճարի չեղարկման միջոցով:

5.1.1.2.5 **Ատամնաբուժական դեղորայք:** Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ ամբուլատոր դեղորայք, որը նշանակվել է DMD-ի կամ DDS-ի կողմից ատամնաբուժական ծառայությունների բուժման համար:

5.1.1.3 **Երկարատև օգտագործման բժշկական սարքավորում (Durable Medical Equipment, DME)**: Պատվիրվում է KP մատակարարի կողմից՝ համաձայն DME ուղեցույցների և տրամադրվում է KFHP/H-ի կողմից այն հիվանդին, ով համապատասխանում է բժշկական տեսանկյունից անհրաժեշտության չափանիշներին: Սահմանափակվում է ապրանքներով, որոնք սովորաբար մատչելի են KP հաստատություններում:

5.1.1.4 **Առողջապահական կրթության դասընթացներ:** Վճարներ, որոնք առնչվում են մատչելի դասընթացներին՝ նշանակված և տրամադրված KP-ի կողմից, որոնք խորհուրդ են տրվում KP մատակարարի կողմից՝ որպես հիվանդի խնամքի ծրագրի մաս:

Proprietary Information. Kaiser Permanente. All rights reserved.
Publication, duplication, disclosure or use for any purpose not expressly authorized in writing is prohibited.
Printed copies are for reference only. Please see electronic copy for latest approved version.

5.1.1.5 Ծառայություններ, որոնք մատչելի են Բացառության կարգով: Բացառություն համարվող որոշ պարագաներում MFA-ն կարող է կիրառվել. (1) Հմուտ բուժքույրական, Միջանկյալ խնամքի և Խնամակալության ծառայություններին, որոնք տրամադրվում են ոչ-KP հաստատությունում ոչ-KP հաստատությունում մատուցվող ծառայությունների և (2) KP մատակարարի կողմից նշանակված և պատվիրված և պայմանագիր կնքած վաճառողի կողմից առաքված DME-ի նկատմամբ, ինչպես նկարագրված է ստորև: Որպեսզի որակավորվի բացառության համար, հիվանդը պետք է համապատասխանի բարձր բժշկական ծախսի չափանիշին՝ նկարագրված Բաժին 5.6.2-ում ստորև:

5.1.1.5.1 Հմուտ բուժքույրական ծառայություններ, Միջանկյալ խնամքի ծառայություններ և Խնամակալության ծառայություններ: Տրամադրվում են KP-ի հետ պայմանագիր կնքած հաստատությունում այն հիվանդի համար, ով ունի նշանակված բժշկական կարիք՝ հիվանդանոցից դուրսգրումը հեշտացնելու համար:

5.1.1.5.2 Երկարատև օգտագործման բժշկական սարքավորում (DME): Վաճառողի կողմից մատակարարվող DME, պատվիրված KP մատակարարի կողմից՝ համաձայն DME ուղեցույցների, և մատուցված պայմանագիր ունեցող վաճառողի կողմից KFHP/H DME բաժնի միջոցով:

5.1.2 Ոչ իրավասու ծառայություններ: MFA-ը չի կարող կիրառվել հետևյալի համար՝

5.1.2.1 Ծառայություններ, որոնք չեն համարվում շտապ կամ բժշկական տեսանկյունից անհրաժեշտ, ինչպես որոշված է KP մատակարարի կողմից: Ստորև ներկայացված է ծառայությունների օրինակների ոչ ամբողջական ցանկ, որոնք ոչ շտապ են կամ բժշկական տեսանկյունից անհրաժեշտ չեն.

5.1.2.1.1 Կոսմետիկ վիրահատություն կամ ծառայություններ, ներառյալ՝ մաշկաբանական ծառայություններ, որոնք, առաջին հերթին, ուղղված են բարելավելու հիվանդի արտաքին տեսքը:

Proprietary Information. Kaiser Permanente. All rights reserved.
Publication, duplication, disclosure or use for any purpose not expressly authorized in writing is prohibited.
Printed copies are for reference only. Please see electronic copy for latest approved version.

5.1.2.1.2 Անպտղության բուժում և հարակից ծառայություններ, ներառյալ ախտորոշումը:

5.1.2.1.3 Մանրածախ բժշկական պարագաներ:

5.1.2.1.4 Այլընտրանքային թերապիաներ, ներառյալ՝ ասեղնաբուժական, քիրոպրակտիկ և մերսման ծառայություններ:

5.1.2.1.5 Ներարկումներ և սարքեր՝ սեռական խանգարումները բուժելու համար:

5.1.2.1.6 Փոխնակ մայրության ծառայություններ:

5.1.2.1.7 Ծառայություններ, որոնք վերաբերվում են երրորդ կողմի պատասխանատվության, անհատական ապահովագրության պաշտպանության կամ աշխատողների փոխհատուցման գործերին:

5.1.2.1.8 **Ծառայություններ ոչ-KP առողջության ապահովություն ունեցող հիվանդների համար**: Ոչ-շտապ օգնության և ոչ-հրատապ ծառայություններ և ամբուլատոր պարագաներ, որոնք ապահովագրված են հիվանդի ոչ-KP առողջության ապահովագրությամբ, որը պահանջում է, որպեսզի հիվանդներն օգտվեն ոչ-KP մատակարարների և դեղատների հատուկ նշված ցանցից:

5.1.2.2 **Դեղատոմսով դեղեր և դեղատան պարագաներ:** Դեղատոմսով դեղերը և պարագաները, որոնք չեն համարվում անհապաղ անհրաժեշտ կամ բժշկական տեսանկյունից անհրաժեշտ, ներառում են, բայց չեն սահմանափակվում հետևյալով.

5.1.2.2.1 Դեղեր, որոնք չեն հաստատվել Դեղագործության և թերապևտիկ կոմիտեի կողմից:

5.1.2.2.2 Ազատ վաճառքի դեղեր և պարագաներ, որոնք չեն նշանակվել կամ պատվիրվել KP մատակարարի կողմից:

5.1.2.2.3 Ազատ վաճառքի դեղեր և պարագաներ, որոնք սովորաբար մատչելի չեն KP դեղատանը և պետք է հատուկ պատվիրվեն:

5.1.2.2.4 Դեղատոմսով դեղեր, որոնք վերաբերվում են երրորդ կողմի պատասխանատվության,

Proprietary Information. Kaiser Permanente. All rights reserved.
Publication, duplication, disclosure or use for any purpose not expressly authorized in writing is prohibited.
Printed copies are for reference only. Please see electronic copy for latest approved version.

անհատական ապահովագրության պաշտպանության կամ աշխատողների փոխհատուցման գործերին:

5.1.2.2.5 Հատուկ բացառված դեղեր (օր.՝ պտղաբերություն, կոսմետիկ, սեռական դիսֆունկցիա):

5.1.2.3 **Դեղատոմսով դեղեր Medicare Մաս D-ին անդամագրվածների համար, ովքեր իրավասու են կամ անդամագրված են Ցածր եկամուտի լրավճարների (Low Income Subsidy, LIS) ծրագրին:** Դեղատոմսով դեղերի մնացած ծախսերի բաշխումը Medicare Advantage Մաս D անդամագրվածների համար, ովքեր կամ իրավասու են, կամ անդամագրված են LIS ծրագրին՝ համաձայն Medicare-ի և Medicaid-ի ծառայությունների կենտրոնների (Centers for Medicare & Medicaid Services, CMS) ուղեցույցների:

5.1.2.4 **Ծառայություններ, որոնք տրամադրվել են KP հաստատություններից դուրս:** MFA քաղաքականությունը կիրառելի է միայն KP հաստատություններում կամ KP մատակարարների կողմից տրամադրված ծառայություններին: Անգամ KP մատակարարի կողմից ուղեգրի առկայության դեպքում, բոլոր այլ ծառայությունները իրավասու չեն MFA-ի համար: Բացառություն են կազմում ծառայությունները, որոնք տրամադրվել են ոչ-KP բժշկական գրասենյակների, հրատապ խնամքի հաստատությունների, շտապ օգնության բաժանմունքների, ինչպես նաև ոչ-KP տնային առողջության, հոսպիսի, վերականգնողական խնամքի և պահառության խնամքի ծառայությունների կողմից, եթե այն նշված չէ որպես բացառություն՝ համաձայն վերոնշյալ Բաժին 5.1.1.5-ի:

5.1.2.5 **Երկարատև օգտագործման բժշկական սարքավորում (DME):** Պայմանագիր կնքած մատակարարի կողմից առաքվող DME բացառվում է, անկախ նրանից, թե արդյոք այն պատվիրվել է KP մատակարարի կողմից, եթե այն նշված չէ որպես բացառություն՝ համաձայն վերոնշյալ Բաժին 5.1.1.5-ի:

5.1.2.6 **Փոխադրման ծառայությունները և ճամփորդության ծախսերը**: MFA ծրագիրը չի օգնում հիվանդներին վճարել շտապ կամ ոչ շտապ տեղափոխման կամ ճանապարհորդության հետ կապված ծախսերը (օր.՝ գիշերակաց և սնունդ):

Proprietary Information. Kaiser Permanente. All rights reserved.
Publication, duplication, disclosure or use for any purpose not expressly authorized in writing is prohibited.
Printed copies are for reference only. Please see electronic copy for latest approved version.

5.1.2.7 **Առողջապահական ծրագրի ապահովագներ:** MFA ծրագիրը չի օգնում հիվանդներին վճարել առողջապահական ապահովագրության հետ կապված ծախսերը (օրինակ՝ պարտք եղած գումարներ կամ ապահովագներ):

5.1.3 Տարածաշրջանի համար համապատասխան իրավասու և ոչ-իրավասու ծառայությունների և ապրանքների վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունները գտնվում են համապատասխան Հավելվածում: Տե՛ս *Kaiser Permanente տարածաշրջանների Հավելվածում, կցումներ 1-8:*

5.2 **Մատակարարներ:** MFA-ն կիրառվում է միայն բժշկական օգնություն տրամադրողների կողմից մատուցվող իրավասու ծառայությունների նկատմամբ, որոնց նկատմամբ կիրառվում է MFA քաղաքականությունը: Տե՛ս *Kaiser Permanente տարածաշրջանների Հավելվածում, կցումներ 1-8:*

5.3 **Ծրագրի վերաբերյալ տեղեկությունների աղբյուրներ և ինչպես դիմել MFA-ի համար:** MFA ծրագրի և դիմելու մասին լրացուցիչ տեղեկություններն ամփոփված են համապատասխան Հավելվածում: Տե՛ս *Kaiser Permanente տարածաշրջանների Հավելվածում, կցումներ 1-8:*

5.3.1 **Ծրագրի վերաբերյալ տեղեկությունների աղբյուրներ:** MFA-ի քաղաքականության, դիմումի ձևաթղթերի, հրահանգների և պարզ լեզվով գրված ամփոփումների (օրինակ՝ քաղաքականության ամփոփումներ կամ ծրագրի բրոշյուրներ) պատճեններն անվճար հասանելի են հանրությանը KFHP/H-ի կայքում, էլ. փոստով, անձամբ այցելելիս կամ ԱՄՆ փոստային ծառայության միջոցով:

5.3.2 **MFA-ի համար դիմելը:** MFA ծրագրին դիմելու համար հիվանդը պետք է ցուցադրի անմիջական կարիք, որը հետևանք է հաշվի՝ ստացված չվճարված հաշվեկշռի KP ծառայությունների, KP-ում նշանակված ժամադրության կամ KP մատակարարի կողմից պատվիրված դեղատոմսով դեղի համար՝ իրավասու ծառայությունների համար, ինչպես նկարագրված է վերևում: Հիվանդը կարող է դիմել MFA ծրագրի համար մի քանի եղանակով, ներառյալ՝ առցանց, անձամբ, հեռախոսով կամ թղթե դիմումով:

5.3.2.1 **KP MFA ծրագիր:** Հիվանդներից պահանջվում է դիմել MFA ծրագրին KP սպասարկման տարածքում, որտեղ նրանք ծառայություններ են ստանում KP-ից:

5.3.2.2 **Հիվանդների իրավասության ստուգում հանրային և մասնավոր ծրագրերի համար:** KFHP/H-ը խրախուսում է բոլոր անձանց ձեռք բերել առողջության ապահովություն՝ առողջապահական ծառայություններին հասանելիությունն ապահովելու, ընդհանուր անձնական առողջությունը պահպանելու և հիվանդի գույքը պաշտպանելու համար:

Proprietary Information. Kaiser Permanente. All rights reserved.
Publication, duplication, disclosure or use for any purpose not expressly authorized in writing is prohibited.
Printed copies are for reference only. Please see electronic copy for latest approved version.

KFHP/H-ը կօգնի չապահովագրված հիվանդներին կամ նրանց երաշխավորներին բացահայտելու և դիմելու համար հասանելի օգնության ծրագրերին, ներառյալ Medicaid-ը և ապահովագրությունը, որը հասանելի է Առողջության նպաստների բորսայում: Հիվանդը, որը համարվում է իրավասու հանրային Medicaid-ի կամ Առողջության նպաստների բորսայում առկա ապահովագրության համար, թերևս պետք է դիմի այդ ծրագրերի համար: Ֆինանսական կարգավիճակ ունեցող հիվանդներից, որոնք գերազանցում են Medicaid-ի եկամուտների իրավասության պարամետրերը, չի պահանջվի դիմել Medicaid-ի համար:

5.4 MFA-ի համար դիմելու նպատակով անհրաժեշտ տեղեկություններ: Ամբողջական անձնական, ֆինանսական և այլ տվյալներն անհրաժեշտ են ստուգելու հիվանդի ֆինանսական կարգավիճակը՝ MFA ծրագրին, ինչպես նաև Medicaid-ին և Առողջության նպաստների բորսայում առկա սուբսիդավորված ապահովագրությանն իրավասությունը որոշելու համար: Հիվանդի ֆինանսական կարգավիճակը ստուգվում է յուրաքանչյուր անգամ, երբ հիվանդը դիմում է օգնության համար:

5.4.1 Ֆինանսական տեղեկություններ տրամադրելը: Հիվանդներից պահանջվում է իրենց MFA դիմումում ներառել տնային տնտեսության չափի և տնային տնտեսության եկամուտների մասին տեղեկատվություն, սակայն ֆինանսական փաստաթղթերի ներկայացումը, որը թույլ կտա ստուգել ֆինանսական վիճակը, պարտադիր չէ, եթե հատուկ պահանջված չէ KP-ի կողմից:

5.4.1.1 Ֆինանսական կարգավիճակի ստուգում առանց ֆինանսական փաստաթղթերի: Եթե ֆինանսական փաստաթղթերը ներառված չեն MFA դիմումում, ապա հիվանդի ֆինանսական վիճակը կստուգվի՝ օգտագործելով արտաքին տվյալների աղբյուրները: Եթե հիվանդի ֆինանսական կարգավիճակը հնարավոր չէ ստուգել՝ օգտագործելով արտաքին տվյալների աղբյուրներ, ապա հիվանդին կարող է խնդրեն ներկայացնել MFA-ի ծրագրի դիմումի մեջ նշված ֆինանսական փաստաթղթերն՝ իր ֆինանսական կարգավիճակը ստուգելու համար:

5.4.1.2 Ֆինանսական կարգավիճակի ստուգում ֆինանսական փաստաթղթերով: Եթե ֆինանսական փաստաթղթերը ներառված են MFA դիմումում, իրավասությունը հիմնված կլինի տրամադրված տեղեկատվության վրա:

Proprietary Information. Kaiser Permanente. All rights reserved.
Publication, duplication, disclosure or use for any purpose not expressly authorized in writing is prohibited.
Printed copies are for reference only. Please see electronic copy for latest approved version.

5.4.2 **Ամբողջական տեղեկություններ տրամադրելը:** MFA ծրագրի իրավասությունը որոշվում է, երբ ստացվում են բոլոր պահանջվող անձնական, ֆինանսական և այլ տվյալները:

5.4.3 **Ոչ ամբողջական տեղեկություններ:** Հիվանդը կտեղեկացվի անձամբ, փոստով կամ հեռախոսով, եթե ստացված պահանջվող տեղեկություններն ամբողջական չեն: Հիվանդը կարող է ներկայացնել պակասող տեղեկությունները ծանուցումը փոստով ուղարկելու, դեմ-առ-դեմ խոսակցության կամ հեռախոսային զրույցի ամսաթվից հետո 30 օրվա ընթացքում: MFA-ը կարող է մերժվել ոչ ամբողջական տեղեկությունների պատճառով:

5.4.4 **Պահանջվող տեղեկությունները մատչելի չեն:** Հիվանդը, որը չունի ծրագրի դիմումի մեջ նշված պահանջվող տեղեկությունները, կարող է դիմել KFHP/H-ին՝ քննարկելու համար, թե որ այլ առկա փաստաթղթերը կարող են ցույց տալ իր իրավասությունը:

5.4.5 **Ֆինանսական տեղեկությունները մատչելի չեն:** Հիվանդը պետք է տրամադրի առնվազն հիմնական ֆինանսական տեղեկությունները (այսինքն՝ եկամուտ, եթե այն կա, և դրա աղբյուրը) և վկայի դրանց վավերականությունը, երբ (1) նրա ֆինանսական կարգավիճակը հնարավոր չէ ստուգել՝ օգտագործելով արտաքին տվյալների աղբյուրներ, (2) պահանջվող ֆինանսական տեղեկությունները մատչելի չեն և (3) գոյություն չունեն իրավասությունը ցույց տվող այլ փաստաթղթեր: Հիմնական ֆինանսական տեղեկությունները և վկայությունը պահանջվում են հիվանդից, երբ կիրառվում է հետևյալներից մեկը՝

5.4.5.1 Հիվանդն անօթևան է կամ անօթևանների կլինիկայից խնամք ստացող:

5.4.5.2 Հիվանդը եկամուտ չունի, իր գործատուից չի ստանում պաշտոնական վճարման կտրոններ (բացառությամբ՝ անհատ ձեռներեցների), ստանում է կանխիկ դրամական պարգևներ կամ նրանից չէր պահանջվել ներկայացնել դաշնային կամ նահանգային եկամտահարկի վերաբերյալ հայտարարագիր նախորդ հարկային տարվա համար:

5.4.5.3 Հիվանդը ենթարկվել է հայտնի ազգային կամ տարածաշրջանային աղետի կամ հանրային առողջության արտակարգ իրավիճակի (Հղում կատարեք Բաժին 5.11-ին ստորև):

5.4.6 **Հիվանդի համագործակցություն:** Հիվանդից պահանջվում է ողջամիտ ջանքեր գործադրել բոլոր պահանջվող տեղեկությունները տրամադրելու համար: Եթե բոլոր պահանջվող տեղեկությունները

Proprietary Information. Kaiser Permanente. All rights reserved.
Publication, duplication, disclosure or use for any purpose not expressly authorized in writing is prohibited.
Printed copies are for reference only. Please see electronic copy for latest approved version.

տրամադրված չեն, իրավասությունը որոշելու համար կարող են նկատի առնվել հանգամանքները:

5.5 **Ենթադրվող իրավասության որոշում:** Ֆինանսական օգնությունը կարող է հաստատվել լրացված դիմումի բացակայության դեպքում այն իրավիճակներում, երբ հիվանդն ունի չմարված մնացորդ, չի արձագանքել KP-ի իրազեկման փորձերին և չի դիմել, սակայն այլ հասանելի տեղեկատվությունը հիմնավորում է ֆինանսական դժվարությունները: Եթե հաստատվի իրավասությունը, հիվանդից չի պահանջվում տրամադրել անձնական, ֆինանսական կամ այլ տեղեկություններ՝ ֆինանսական կարգավիճակը հաստատելու համար, և նրան ավտոմատ կերպով կշնորհվի MFA: Ենթադրյալ իրավասության որոշման պատճառները և օժանդակ տեղեկությունները կփաստագրվեն հիվանդի հաշվում և կարող են ներառվել հիվանդի լրացուցիչ նշումներ: Հիվանդը ենթադրվում է որպես իրավասու, և փաստաթղթերի պահանջները հանվում են, եթե հիվանդը նախնական որակավորում է ստացել կամ առկա են ֆինանսական դժվարությունների նշաններ:

5.5.1 **Նախնական որակավորված:** Իրավիճակները, որտեղ առկա են ապացույցներ, որ հիվանդն անդամագրված է կամ որոշվել է ֆինանսական զննման գործընթացի միջոցով՝ ստորև նշված հանրային և մասնավոր աջակցության ծրագրերին պոտենցիալ որակավորում ստանալու համար, ենթադրվում է, որ իրավասու է (այսինքն՝ նախնական որակավորում ստացած) MFA ծրագրի համար: Հիվանդը համարվում է նախնական որակավորում ստացած, եթե հիվանդը համապատասխանում է հետևյալ չափանիշներից որևէ մեկին.

5.5.1.1 Անդամագրված է Համայնքային MFA (Community MFA, CMFA) ծրագրին, որին հիվանդն ուղեգրվել է կամ նախարակավորվել հետևյալի միջոցով՝ (1) դաշնային, նահանգային կամ տեղական կառավարություն, (2) համայնքային հիմունքով գործընկեր կազմակերպություն, կամ (3) KFHP/H-ի կողմից հովանավորող համայնքային առողջապահական միջոցառման ժամանակ:

5.5.1.2 Անդամագրված է KP Համայնքային նպաստի ծրագրին, որը նախատեսված է աջակցելու ցածր եկամուտ ունեցող հիվանդներին, և նախարակավորված է KFHP/H անձնակազմի կողմից:

5.5.1.3 Անդամագրված է կամ ենթադրվում է, որ իրավասու է միջոցները ստուգող վստահելի առողջապահական ապահովագրության ծրագրին (օրինակ՝ Medicaid, Medicare-ի Ցածր եկամուտի լրավճարների ծրագիր):

5.5.1.4 Անդամագրված է վստահելի միջոցները ստուգող վստահելի հանրային աջակցության ծրագրին (օրինակ՝ Կանայք,

Proprietary Information. Kaiser Permanente. All rights reserved.
Publication, duplication, disclosure or use for any purpose not expressly authorized in writing is prohibited.
Printed copies are for reference only. Please see electronic copy for latest approved version.

նորածիններ և երեխաներ ծրագրեր, Լրացուցիչ սնուցման և աջակցության ծրագրեր):

5.5.1.5 Բնակվում է ցածր եկամուտ ունեցող կամ սուբսիդավորվող բնակարաններում:

5.5.1.6 Ստացել է վերջին 30 օրվա ընթացքում սկսված MFA պարգև:

5.5.2 **Ֆինանսական դժվարությունների ցուցիչներ:** KP հաստատությունում խնամք ստացած հիվանդն, ում մոտ ֆինանսական դժվարությունների ցուցիչներ կան (օրինակ՝ ժամկետանց չվճարված մնացորդներ կամ վճարելու անկարողություն), կարող է ստուգվել KP-ի և Պարտքերը հավաքագրող գործակալությունների կողմից ծրագրին իրավասու լինելու և ֆինանսական դժվարությունների համար՝ օգտագործելով արտաքին տվյալների աղբյուրները: Իրավասու լինելու դեպքում հիվանդը կստանա MFA պարգև միայն իրավասու չվճարված մնացորդների համար:

5.5.2.1 **Իրավասության որոշում KP-ի կողմից:** KP-ն կարող է հիվանդներին զննել ծրագրի իրավունակության համար, նախքան նրանց չմարված մնացորդները կներկայացվեն պարտքերի հավաքագրման գործակալություն:

5.5.2.1.1 **Չվճարված ինքնավճարվող մնացորդներ:** KP-ն կզզնի հիվանդներին, որոնց գործերը պետք է ուղարկվեն պարտքերի հավաքագրման գործակալություն՝ ծրագրին իրավասության համար՝ հիմնվելով միջոցների ստուգման չափանիշների վրա, ինչպես նկարագրված է *5.6.1 Ծրագրի իրավասության չափանիշներում*:

5.5.2.1.2 **Ֆինանսական դժվարությունների ցուցիչներ:** Չմարված մնացորդներով որոշ հիվանդների ֆինանսական տեղեկատվությունը կարող է հասանելի չլինել իրավասությունը որոշելու համար, սակայն ֆինանսական դժվարությունների մասին այլ ցուցիչներ, որոնք հայտնի են դարձել KP-ին, կարող են հանգեցնել ցածր եկամուտի որոշմանը: Իրավասու չմարված մնացորդները կկիրառվեն MFA ծրագրի նկատմամբ և ենթակա չեն հետագա հավաքագրման գործողությունների: Ֆինանսական դժվարությունների ցուցիչները կարող են ներառել, բայց չեն սահմանափակվում հետևյալով.

Proprietary Information. Kaiser Permanente. All rights reserved.
Publication, duplication, disclosure or use for any purpose not expressly authorized in writing is prohibited.
Printed copies are for reference only. Please see electronic copy for latest approved version.

5.5.2.1.2.1 Հիվանդը ԱՄՆ քաղաքացի չէ՝ առանց հովանավորության, սոցիալական ապահովության համարի, հարկային գրառումների կամ վավեր վճարային հասցեների, չի շփվել KP-ի հետ իր հաշվի մասին, և ողջամիտ հավաքագրման ջանքերը ցույց են տալիս, որ հիվանդը չունի ֆինանսական կամ ակտիվների ռեսուրսներ իր ծագման երկրում:

5.5.2.1.2.2 Հիվանդն ունի նախկինում մատուցված KP ծառայությունների չմարված մնացորդներ և այդ ժամանակից ի վեր երկար ժամանակով բանտարկված է եղել, ամուսնացած չէ, եկամտի մասին ցուցիչներ չկան, և KP-ն չի կարողացել կապ հաստատել հիվանդի հետ:

5.5.2.1.2.3 Հիվանդը մահացել է՝ առանց գույքի/ակտիվների կամ առանց պարտքերի համար պատասխանատու հարազատի:

5.5.2.1.2.4 Հիվանդը մահացած է, և կտակը կամ գույքն ակնհայտորեն անվճարունակ է:

5.5.2.2 **Պարտքերի հավաքագրման գործակալության կողմից իրավասության որոշում**: Պարտքերի հավաքագրման գործակալություն ներկայացված չմարված մնացորդները պարբերաբար կուսումնասիրվեն ծրագրին իրավասության և ֆինանսական դժվարությունների համար:

5.5.2.2.1 **Ֆինանսական դժվարությունների ցուցիչներ:** Պարտքերի հավաքագրման գործակալությունները կիրականացնեն հիվանդների հաշիվների անկախ վերանայում՝ օգտագործելով այլ ֆինանսական տեղեկատվություն (օրինակ՝ անցյալ սնանկություններ, ոչ KP պարտքեր, վարկային

Proprietary Information. Kaiser Permanente. All rights reserved.
Publication, duplication, disclosure or use for any purpose not expressly authorized in writing is prohibited.
Printed copies are for reference only. Please see electronic copy for latest approved version.

պատմություն, վճարելու հակում և այլն) և սոցիալ-տնտեսական նկատառումներ (օրինակ՝ տան սեփականություն), որոնք կարող են հանգեցնել ֆինանսական դժվարությունների որոշմանը: Իրավասու լինելու դեպքում հիվանդը կստանա MFA պարգև միայն իրավասու չվճարված մնացորդների համար: Իրավասու չմարված մնացորդները կվերադարձվեն KP-ին, կկիրառվեն MFA ծրագրի նկատմամբ և ենթակա չեն հետագա հավաքագրման գործողությունների:

5.6 **Ծրագրի իրավունակության չափանիշներ:** Ինչպես ամփոփված է տարածաշրջանին հատուկ փոփոխության Բաժին V-ում, MFA-ի համար դիմող հիվանդը կարող է որակավորվել ֆինանսական օգնության համար՝ միջոցների ստուգման կամ բժշկական բարձր ծախսերի չափանիշների հիման վրա: Տե՛ս *Kaiser Permanente տարածաշրջանների Հավելվածում, կցումներ 1-8:*

5.6.1 **Միջոցների ստուգման չափանիշներ:** Հիվանդը գնահատվում է՝ որոշելու համար, թե արդյոք հիվանդը համապատասխանում է միջոցների ստուգման չափանիշներին:

5.6.1.1 **Եկամտի մակարդակի վրա հիմնված իրավասություն:** Հիվանդն, ում տնային տնտեսության համախառն եկամուտը պակաս է կամ հավասար KFHP/H-ի միջոցների ստուգման չափանիշներին՝ որպես Դաշնային աղքատության ուղեցույցների (Federal Poverty Guidelines, FPG) տոկոս, իրավասու է ֆինանսական օգնություն ստանալու համար: Միջոցների ստուգման մեջ ակտիվները հաշվի չեն առնվում:

5.6.1.2 **Տնային տնտեսության եկամուտ:** Եկամտի պահանջները վերաբերվում են տնային տնտեսության անդամներին: Տնային տնտեսությունը միասին ապրող երկու կամ ավելի անձանց խումբ է, որոնք միմյանց կապված են ծննդի, ամուսնության կամ որդեգրման միջոցով: Տնային տնտեսության անդամները կարող են ներառել կանանց/ամուսիններին, որակավորվող ընտանեկան զուգընկերներին, երեխաներին, խնամակալ բարեկամներին, խնամակալ բարեկամների երեխաներին և այլ անձանց, ում հանդեպ տնային տնտեսությունում ապրող անձը, կինը/ամուսինն, ընտանեկան զուգընկերը կամ ծնողը կրում է ֆինանսական պատասխանատվություն:

5.6.2 **Բժշկական խոշոր ծախսերի չափանիշ:** Հիվանդը գնահատվում է՝ որոշելու համար, թե արդյոք հիվանդը համապատասխանում է բժշկական բարձր ծախսերի իրավասության չափանիշներին:

Proprietary Information. Kaiser Permanente. All rights reserved.
Publication, duplication, disclosure or use for any purpose not expressly authorized in writing is prohibited.
Printed copies are for reference only. Please see electronic copy for latest approved version.

5.6.2.1 **Բժշկական բարձր ծախսերի վրա հիմնված իրավասություն:** Տնային տնտեսության համախառն եկամտի ցանկացած մակարդակով հիվանդ, ով ունի կուտակած գրպանից վճարված բժշկական և դեղատան ծախսեր որակավորված ծառայությունների համար, որոնք դիմումից առաջ 12 ամսվա ընթացքում ավելի են կամ հավասար տնային տնտեսության տարեկան եկամտի 10%-ին, իրավասու է ֆինանսական օգնության համար:

5.6.2.1.1 **KFHP/H գրպանից վճարվող ծախսեր:** Բժշկական և դեղատան ծախսեր, որոնք կուտակվել են KP հաստատություններում, ներառում են՝ համավճարներ, կանխավճարներ, համաապահովագրություն և չհատուցվող գումարներ, որոնք վերաբերվում են որակավորված ծառայություններին:

5.6.2.1.2 **Ոչ-KFHP/H գրպանից վճարվող ծախսեր:** Ներառվում են բժշկական, դեղատան և ատամնաբուժական ծախսեր, որոնք մատուցվել են ոչ KP հաստատություններում, և վերաբերվում են իրավասու, բժշկական տեսանկյունից անհրաժեշտ ծառայություններին և կուտակված են հիվանդի կողմից (բացառությամբ՝ որևէ զեղչ կամ հաշվի զրոյացում): Հիվանդը պետք է ներկայացնի փաստաթղթեր ոչ-KP հաստատություններում ստացված ծառայությունների համար ունեցած բժշկական ծախսերի վերաբերյալ:

5.6.2.1.2.1 Եթե ոչ KFHP/H մատակարարը, որտեղ գանձվում են վճարներ, առաջարկում է Ֆինանսական աջակցության ծրագիր, որի համար հիվանդը կարող է իրավասու լինել, հիվանդները պետք է դիմեն, նախքան գանձումները կհամարվեն իրավասու բժշկական ծախսեր:

5.6.2.1.3 **Առողջապահական ծրագրի ապահովագներ:** Գրպանից վճարված ծախսերը չեն ներառում ծախսեր, որոնք առնչվում են առողջապահական խնամքի ապահովագրությանը (օրինակ՝ պարտք եղած գումարներ կամ ապահովագներ):

Proprietary Information. Kaiser Permanente. All rights reserved.
Publication, duplication, disclosure or use for any purpose not expressly authorized in writing is prohibited.
Printed copies are for reference only. Please see electronic copy for latest approved version.

5.7 Մերժումներ և բողոքարկումներ

5.7.1 **Մերժումներ:** Հիվանդը, որը դիմում է MFA ծրագրի համար և չի համապատասխանում իրավասության չափանիշներին, տեղեկացվում է գրավոր, որ MFA-ի համար իր խնդրանքը մերժվել է:

5.7.2 **Ինչպես բողոքարկել MFA-ի մերժումը:** Այն հիվանդները, որոնց MFA-ն մերժվել է կամ ստացել են հավանություն և կարծում են, որ նրանք որակավորում են ավելի բարձր MFA մարգևի, կարող են բողոքարկել որոշումը: Հիվանդներին խրախուսվում է բողոքարկել, եթե նրանք (1) նախկինում չեն ներկայացրել ֆինանսական փաստաթղթեր կամ (2) իրենց տնային տնտեսության եկամուտը փոխվել է: Բողոքարկման գործընթացի վերաբերյալ հրահանգները ներառված են MFA-ի մերժման և հաստատման նամակներում, ինչպես նաև MFA կայքում: Բողոքարկումներն ուսումնասիրվում են KFHP/H-ի հատուկ նշանակված անձնակազմի կողմից: Հիվանդները գրավոր տեղեկացվում են իրենց բողոքարկման արդյունքների մասին: Բողոքարկման բոլոր որոշումները վերջնական են:

5.8 **Պարգևի կառուցվածք:** MFA պարգևները կիրառվում են իրավասու ժամկետանց կամ չմարված մնացորդների, պարտքերի հավաքագրման գործակալությանի դիմած մնացորդների և առկախ գանձումների նկատմամբ: MFA պարգևները կարող են նաև ներառել ցանկացած պահանջվող հետբուժական ծառայությունների իրավասու ժամանակաշրջան, ըստ KP մատակարարի որոշման:

5.8.1 **Պարգևի հիմք:** MFA ծրագրի կողմից վճարվող հիվանդի ծախսերը որոշվում են՝ հիմնվելով հիվանդի առողջապահական խնամքի ապահովագրության առկայության և հիվանդի տնային տնտեսության եկամտի վրա:

5.8.1.1 **MFA-ի համար իրավասու հիվանդ՝ առանց առողջապահական խնամքի ապահովագրության (չապահովագրված):** Իրավասու չապահովագրված հիվանդը ստանում է զեղչ բոլոր իրավասու ծառայությունների համար հիվանդի ծախսերի համար:

5.8.1.2 **MFA-ի համար իրավասու հիվանդ՝ առողջապահական խնամքի ապահովագրությամբ (ապահովագրված):** Իրավասու ապահովագրված հիվանդը ստանում է զեղչ բոլոր իրավասու ծառայությունների համար հիվանդի ծախսերի համար, (1) որի համար նա անձամբ պատասխանատու է, և (2) որը չի վճարվել իր ապահովագրական ընկերության կողմից: Հիվանդը պետք է ներկայացնի փաստաթղթեր, օրինակ՝ Նպաստների բացատրություն (Explanation of Benefits, EOB)՝ որոշելու համար, թե հաշվի որ մասը չի վճարվել

Proprietary Information. Kaiser Permanente. All rights reserved.
Publication, duplication, disclosure or use for any purpose not expressly authorized in writing is prohibited.
Printed copies are for reference only. Please see electronic copy for latest approved version.

ապահովագրության կողմից: Իրավասու ապահովագրված հիվանդից պահանջվում է բողոքարկում ներկայացնել իր ապահովագրական ընկերությանը ցանկացած մերժված հայցի համար: Իրավասու ապահովագրված հիվանդներից պահանջվում է ներկայացնել իրենց ապահովագրական ընկերության կողմից բողոքարկումը մերժելու փաստաթղթերը:

5.8.1.2.1 **Ապահովագրական ընկերությունից ստացված վճարումներ:** Իրավասու ապահովագրված հիվանդը պետք է KFHP/H-ին փոխանցի KFHP/H-ի կողմից մատուցված ծառայության համար ցանկացած վճարում, որը հիվանդը ստացել է հիվանդի ապահովագրական ընկերությունից:

5.8.1.3 **Զեղչի ժամանակացույց:** Գումարները, որոնք KP-ն գանձում է այն հիվանդից, որը որակավորում է բժշկական ֆինանսական օգնության համար, հիմնված է այն իրավասության չափանիշների տեսակի վրա, որոնք օգտագործվում են ծրագրին հիվանդին որակավորելու համար: Քաղաքականության ներքո մատչելի զեղչերի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններն ամփոփված են համապատասխան Հավելվածում: Տե՛ս *Kaiser Permanente տարածաշրջանների Հավելվածում, կցումներ 1-8:*

5.8.1.3.1 **Ենթադրվող իրավասության որոշում - Նախնական որակավորված:** MFA իրավասության համար նախնական որակավորված հիվանդը (ինչպես ամփոփված է բաժին 5.5.1-ում) կստանա 100% MFA զեղչ հիվանդի արժեքի կամ մատուցվող ծառայությունների համար, որոնց համար պատասխանատու է հիվանդը:

5.8.1.3.2 **Ենթադրյալ իրավասության որոշում KP-ի կողմից – Չմարված ինքնավճարման մնացորդներ:** Հիվանդը, որը համապատասխանում է միջոցների ստուգման չափանիշներին, կստանա հիվանդի ծախսերի լոգարիթմական սանդղակով հաշվարկված MFA զեղչ կամ հիվանդի պատասխանատվությունը հանդիսացող ծառայությունների արժեքի մի մասի զեղչ:

Proprietary Information. Kaiser Permanente. All rights reserved.
Publication, duplication, disclosure or use for any purpose not expressly authorized in writing is prohibited.
Printed copies are for reference only. Please see electronic copy for latest approved version.

5.8.1.3.3 **Ենթադրյալ իրավասության որոշում KP-ի կողմից – Ֆինանսական դժվարությունների ցուցիչներ:** Հիվանդը, որը համապատասխանում է ֆինանսական դժվարությունների ցուցիչներին, կստանա հիվանդի ծախսերի 100% MFA զեղչ կամ հիվանդի պատասխանատվությունը հանդիսացող ծառայությունների արժեքի մի մասի զեղչ

5.8.1.3.4 **Ենթադրյալ իրավասության որոշում Պարտքերի հավաքագրման գործակալության կողմից:** Հիվանդը, որը համապատասխանում է ֆինանսական դժվարությունների վաճառողի ցուցիչներին, կստանա հիվանդի ծախսերի 100% MFA զեղչ կամ հիվանդի պատասխանատվությունը հանդիսացող ծառայությունների արժեքի մի մասի զեղչ:

5.8.1.3.5 **Հիվանդը համապատասխանում է միջոցների ստուգման չափանիշներին:** Հիվանդը, որը համապատասխանում է միջոցների ստուգման չափանիշներին, կստանա հիվանդի ծախսերի լոգարիթմական սանդղակով հաշվարկված MFA զեղչ կամ հիվանդի պատասխանատվությունը հանդիսացող ծառայությունների արժեքի մի մասի զեղչ:

5.8.1.3.6 **Հիվանդը համապատասխանում է Բժշկական բարձր ծախսերի չափանիշներին:** Հիվանդը, որը համապատասխանում է Բժշկական բարձր ծախսերի չափանիշներին, կստանա հիվանդի ծախսերի կամ հիվանդի պատասխանատվությունը հանդիսացող ծառայությունների արժեքի 100% MFA զեղչ:

5.8.1.4 **Փոխհատուցում համաձայնություններից:** KFHP/H-ն փոխհատուցում է հետապնդում երրորդ կողմի պատասխանատվության/անհատական ապահովագրության պաշտպանության համաձայնություններից, վճարողներից կամ այլ իրավականորեն պատասխանատու կողմերից, ինչպես կիրառելի է:

5.8.2 **Պարգևի իրավասության ժամանակաշրջան:** Հետբուժական ծառայությունների իրավասության ժամանակաշրջանը սկսում է հաստատման, կամ ծառայությունների մատուցման, կամ դեղորայքի

Proprietary Information. Kaiser Permanente. All rights reserved.
Publication, duplication, disclosure or use for any purpose not expressly authorized in writing is prohibited.
Printed copies are for reference only. Please see electronic copy for latest approved version.

տրամադրման ամսաթվից: Իրավասության ժամանակահատվածի տևողությունը միայն սահմանափակ ժամանակահատված է և որոշվում է KP-ի հայեցողությամբ՝ տարբեր ձևերով, ներառյալ.

5.8.2.1 **Հատուկ ժամանակահատված:** Առավելագույնը 365 օր իրավասու հետբուժական ծառայությունների և հիվանդի ծախսի չվճարված մնացորդների համար՝ բացահայտված նախքան չվճարված պարտքի ուղղորդումը:

5.8.2.2 **Հմուտ բուժքույրական ծառայություններ, Խնամակալության ծառայություններ և Միջանկյալ խնամքի ծառայություններ:** KP-ից դուրս մատուցվող ծառայությունների համար առավելագույնը 30 օր:

5.8.2.3 **Երկարատև օգտագործման բժշկական սարքավորումներ:** Առավելագույնը 180 օր վաճառողի կողմից առաքված բժշկական սարքավորման համար:

5.8.2.4 **Բուժման կուրս կամ խնամքի դրվագ**: Առավելագույնը 180 օր բուժման կուրսի և/կամ խնամքի դրվագի համար՝ ըստ KP մատակարարի որոշման:

5.8.2.5 **Հիվանդներ, որոնք հնարավոր է իրավասու են հանրային և մասնավոր առողջապահական ապահովագրության ծրագրերի համար:** Առավելագույնը 90 օր՝ հիվանդին օգնելու համար, մինչ նա դիմում է հանրային և մասնավոր առողջության ապահովագրության ծրագրերին:

5.8.2.6 **Մեկանգամյա դեղատան պարգև:** Նախքան MFA ծրագրին դիմելը, հիվանդն իրավասու է ստանալու մեկանգամյա դեղատան պարգև, եթե հիվանդը (1) չունի ակտիվ սպասվող MFA պարգև, (2) ձեռք է բերում դեղատոմսով դեղ, որը գրված է KP մատակարարի կողմից KFHP/H դեղատանը, (3) ցույց է տալիս, որ հնարավորություն չունի վճարելու դեղատոմսով դեղի համար և (4) ֆինանսական խորհրդատուն հասանելի չէ MFA իրավասությունը որոշելու համար: Մեկանգամյա պարգևը յուրաքանչյուր հիվանդի համար հասանելի է միայն մեկ անգամ, սահմանափակվում է մեկ օրով և ներառում է դեղորայքի ողջամիտ պաշար, որը բժշկական տեսանկյունից հարմար է համարվում KP մատակարարի կողմից:

5.8.2.7 **Ֆինանսական աջակցության համար կրկին դիմելը:** Սկսած երեսուն (30) օրից՝ նախքան գոյություն ունեցող պարգևի ժամկետի սպառումը և դրանից հետո ցանկացած պահի, հիվանդը կարող է կրկին դիմել ծրագրին անդամակցելու համար:

Proprietary Information. Kaiser Permanente. All rights reserved.
Publication, duplication, disclosure or use for any purpose not expressly authorized in writing is prohibited.
Printed copies are for reference only. Please see electronic copy for latest approved version.

5.8.3 **Պարգևի չեղարկում, վերացում կամ փոփոխում:** KFHP/H կարող է որոշ իրավիճակներում, իր հայեցողությամբ, MFA պարգևը չեղարկել, վերացնել կամ փոփոխել: Իրավիճակները ներառում են՝

5.8.3.1 **Խարդախություն, գողություն կամ ֆինանսական փոփոխություններ:** Խարդախության, խեղաթյուրման, գողության, հիվանդի ֆինանսական վիճակի փոփոխության դեպք կամ այլ հանգամանքներ, որոնք խաթարում են MFA ծրագրի անձեռնմխելիությունը:

5.8.3.2 **Հանրային և մասնավոր առողջապահական ապահովագրության ծրագրերի իրավասություն:** Հիվանդը, որին ստուգել են հանրային և մասնավոր առողջապահական ապահովագրության ծրագրերին մասնակցության համար, ենթադրվում է, որ իրավասու է, սակայն նա չի համագործակցում այդ ծրագրերի դիմումի գործընթացի հետ:

5.8.3.3 **Հայտնաբերվել են վճարման այլ աղբյուրներ:** Հիվանդի կողմից MFA պարգևը ստանալուց հետո առողջապահական ապահովագրության կամ վճարման այլ աղբյուրների հայտնաբերումը կհանգեցնի հետին ամսաթվով իրավասու ծառայությունների համար կրկին հաշիվ ներկայացնելուն: Եթե դա տեղի ունենա, հիվանդին հաշիվ չի ներկայացվում հաշվի այն մասի համար, (1) որի համար հիվանդն անձամբ պատասխանատու է, և (2) որի համար վճարված չէ նրա առողջապահական ապահովագրության կամ վճարման այլ աղբյուրների կողմից:

5.8.3.4 **Առողջապահական ապահովագրության փոփոխություններ:** Հիվանդին, որը ենթարկվել է առողջապահական ապահովագրության փոփոխության, կխնդրեն կրկին դիմել MFA ծրագրի համար:

5.8.3.5 **Տնային տնտեսության եկամտի փոփոխություն**: Հիվանդին, որն ունեցել է տնային տնտեսության եկամտի փոփոխություն, կխնդրեն կրկին դիմել MFA ծրագրի համար:

5.9 **Վճարների սահմանափակում:** Արգելվում է MFA-ի համար իրավասու հիվանդներին հաշիվ ներկայացնել Kaiser Foundation Hospital-ում տրամադրված իրավասու հիվանդանոցային ծառայությունների ամբողջական գումարի չափով (օրինակ՝ համախառն հաշիվներ): Հիվանդին, որը Kaiser Foundation Hospital-ում ստացել է իրավասու ծառայություններ և իրավասու է MFA ծրագրի համար, սակայն չի ստանում MFA պարգև կամ մերժել է MFA պարգևը, հաշիվ չի ներկայացվում ընդհանրապես գանձվող գումարից (amounts generally billed, AGB) ավել այդ ծառայությունների համար:

Proprietary Information. Kaiser Permanente. All rights reserved.
Publication, duplication, disclosure or use for any purpose not expressly authorized in writing is prohibited.
Printed copies are for reference only. Please see electronic copy for latest approved version.

5.9.1 **Հիմնականում հաշիվ ներկայացվող գումար:** Շտապ օգնության կամ բժշկական տեսանկյունից այլ անհրաժեշտ խնամքի համար ընդհանրապես գանձվող գումարներն այն հիվանդներին, ովքեր ապահովագրված են այդպիսի խնամքի համար, որոշվում են KP հաստատությունների համար, ինչպես նկարագրված է տարածաշրջանին հատուկ կիրառելի հավելվածի VII բաժնում: Տե՛ս *Kaiser Permanente տարածաշրջանների Հավելվածում, կցումներ 1-8:*

5.10 **Պարտքի հավաքագրման գործողություններ**

5.10.1 **Տեղեկացման ողջամիտ ջանքեր:** KFHP/H կամ նրա անունից գործող պարտքի հավաքագրման գործակալությունը ողջամիտ ջանքեր է գործադրում տեղեկացնելու հիվանդներին MFA ծրագրի պարտքերի կամ չվճարված մնացորդների մասին: Տեղեկացման ողջամիտ ջանքերը ներառում են՝

5.10.1.1 Հիվանդանոցից դուրսգրման առաջին հայտարարագրից 120 օր հետո՝ մեկ գրավոր ծանուցման տրամադրում, որով հաշվի տիրոջը տեղեկացնում են, որ MFA-ը հասանելի է որակավորվող անձանց համար:

5.10.1.2 Գրավոր ծանուցման տրամադրում՝ պարտքի հավաքագրման արտահերթ գործողությունների (extraordinary collection actions, ECA) ցանկով, որոնք KFHP/H-ը կամ պարտքի հավաքագրման գործակալությունը պատրաստվում է իրականացնել հիվանդի ծախսի մնացորդի գանձման համար, ինչպես նաև այդ գործողությունների վերջնաժամկետը, որը պետք է լինի գրավոր ծանուցման ամսաթվից 30 օր հետո:

5.10.1.3 Հիվանդի հիվանդանոցային առաջին հայտարարագրի հետ մեկտեղ պարզ լեզվով գրված MFA-ի քաղաքականության ամփոփման տրամադրում:

5.10.1.4 Հաշվի տիրոջը MFA-ի քաղաքականության վերաբերյալ բանավոր կերպով տեղեկացնելու ջանքեր, և թե ինչպես աջակցություն ստանալ MFA դիմումի գործընթացի միջոցով:

5.10.1.5 Ծրագրի իրավասության որոշում՝ ըստ պահանջի, նախքան հիվանդի ժամկետանցած կամ չվճարված մնացորդների փոխանցվելը պարտքերի հավաքագրման գործակալությանը:

5.10.2 **Պարտքի հավաքագրման արտահերթ գործողությունների ժամանակավոր դադարեցում:** KFHP/H չի իրականացնում և թույլ չի տալիս, որպեսզի պարտքի հավաքագրման գործակալություններն իր անունից իրականացնեն պարտքի հավաքագրման արտահերթ գործողություններ (ECA) հիվանդի հանդեպ, եթե հիվանդը՝

Proprietary Information. Kaiser Permanente. All rights reserved.
Publication, duplication, disclosure or use for any purpose not expressly authorized in writing is prohibited.
Printed copies are for reference only. Please see electronic copy for latest approved version.

5.10.2.1 Ունի գործող MFA պարգև, կամ

5.10.2.2 ECA-ի սկսելուց հետո սկսել է MFA դիմումի գործընթաց: ECA-ը ժամանակավորապես դադարեցվում է մինչև վերջնական իրավասության որոշումը:

5.10.3 Պարտքի հավաքագրման թույլատրելի արտահերթ գործողություններ:

5.10.3.1 Ողջամիտ ջանքերի վերջնական որոշում: ECA-ը սկսելուց առաջ, տարածքի Եկամուտի շրջանի հիվանդի ֆինանսական ծառայությունների ղեկավարը համոզվում է հետևյալում՝

5.10.3.1.1 Գործադրվել են ողջամիտ ջանքեր՝ տեղեկացնելու հիվանդին MFA ծրագրի մասին, և

5.10.3.1.2 Հիվանդին տրամադրվել է առնվազն 240 օր հաշվի առաջին հայտարարագրից հետո՝ MFA-ին դիմելու համար:

5.10.3.2 Զեկուցում Սպառողների վարկերի գործակալություններին կամ Վարկային բյուրոներին: KFHP/H-ը կամ իր անունից գործող պարտքի հավաքագրման գործակալությունը կարող է անբարենպաստ տեղեկությունները հայտնել սպառողների վարկերի գործակալություններին կամ վարկային բյուրոներին:

5.10.3.3 Դատական կամ քաղաքացիական գործողություններ: Դատական կամ քաղաքացիական գործողություններին դիմելուց առաջ, KFHP/H-ը գնահատում է հիվանդի ֆինանսական կարգավիճակն՝ օգտագործելով արտաքին տվյալների աղբյուրներ՝ պարզելու համար, թե արդյոք հիվանդն իրավասու է MFA ծրագրի համար:

5.10.3.3.1 Իրավասու է MFA-ի համար: Լրացուցիչ գործողություններ չեն իրականացվելու հիվանդի նկատմամբ, ով իրավասու է MFA ծրագրի համար: Հաշիվները, որոնք իրավասու են MFA-ի համար չեղարկվում են և վերադարձվում են հետին ամսաթվով:

5.10.3.3.2 Իրավասու չէ MFA-ի համար: Շատ հազվադեպ դեպքերում կիրականացվեն հետևյալ գործողությունները՝ տարածքի Գլխավոր ֆինանսական պաշտոնյայի կամ Վերահսկիչի նախօրոք համաձայնությամբ՝

5.10.3.3.2.1 Աշխատավարձի բռնի գանձում

Proprietary Information. Kaiser Permanente. All rights reserved.
Publication, duplication, disclosure or use for any purpose not expressly authorized in writing is prohibited.
Printed copies are for reference only. Please see electronic copy for latest approved version.

5.10.3.3.2.2 **Դատական հայցեր/քաղաքացիական գործողություններ:** Իրավական գործողություններ չեն իրականացվելու այն անձանց նկատմամբ, ովքեր գործազուրկ են և այլ էական եկամուտ չունեն:

5.10.3.3.2.3 Կալանադրում բնակավայրերի վրա:

5.10.4 **Արգելված պարտքի հավաքագրման արտահերթ գործողություններ:** KFHP/H-ը ոչ մի դեպքում չի իրականացնում, թույլատրում կամ պարտքի հավաքագրման գործակալություններին թույլատրում իրականացնել հետևյալը.

5.10.4.1 Հետաձգել կամ մերժել խնամքը հաշվի տիրոջ նախկին չվճարված պարտքերի պատճառով, կամ պահանջել վճար նախքան շտապ օգնության կամ բժշկական տեսանկյունից անհրաժեշտ խնամք տրամադրելը:

5.10.4.2 Վաճառել հաշվի տիրոջ պարտքը երրորդ կողմին:

5.10.4.3 Անշարժ գույքի գրավի հետգնման մերժում կամ հաշիվների առգրավում:

5.10.4.4 Պահանջել ձերբակալման հրաման:

5.10.4.5 Պահանջել դատարան բերման ենթարկում:

5.11 **Աղետների և հանրային առողջության արտակարգ իրավիճակների արձագանքում:** KFHP/H կարող է ժամանակավորապես փոփոխել իր MFA ծրագրի իրավունակության չափանիշները և դիմումի ներկայացման գործընթացը՝ բարելավելու հայտնի իրադարձություններից տուժած համայնքների և հիվանդների օգնությունը, որը նահանգի կամ դաշնային կառավարության կողմից որակվել է որպես աղետ կամ հանրային առողջության արտակարգ իրավիճակ:

5.11.1 **Իրավասության հնարավոր փոփոխություններ**: MFA-ի իրավասության չափանիշների ժամանակավոր փոփոխությունները կարող են ներառել.

5.11.1.1 Իրավասության սահմանափակումների կասեցում:

5.11.1.2 Չափանիշների շեմի բարձրացման միջոցների փորձարկում:

5.11.1.3 Բժշկական ծախսերի բարձր չափանիշների շեմի իջեցում:

Proprietary Information. Kaiser Permanente. All rights reserved.
Publication, duplication, disclosure or use for any purpose not expressly authorized in writing is prohibited.
Printed copies are for reference only. Please see electronic copy for latest approved version.

5.11.2 Դիմումի ներկայացման գործընթացի հնարավոր փոփոխություններ: MFA-ի դիմումի ներկայացման գործընթացի ժամանակավոր փոփոխությունները կարող են ներառել.

5.11.2.1 Հիվանդին թույլատրել, որ տրամադրի հիմնական ֆինանսական տեղեկությունները (օրինակ՝ եկամուտ, եթե այն կա, և դրա աղբյուրը) և վկայի դրանց վավերականությունը, երբ (1) նրա ֆինանսական կարգավիճակը հնարավոր չէ ստուգել՝ օգտագործելով արտաքին տվյալների աղբյուրներ, (2) պահանջվող ֆինանսական տեղեկությունները մատչելի չեն այդ իրադարձության պատճառով և (3) գոյություն չունեն իրավասությունը ցույց տվող այլ ապացույցներ:

5.11.2.2 Հաշվի առնելով տնային տնտեսության եկամուտը՝ որոշելիս այդ իրադարձության հետևանքով աշխատավարձերի / զբաղվածության կորստի ազդեցությունը:

5.11.3 Հանրությանը հասանելի տեղեկություններ: MFA ծրագրի ժամանակավոր փոփոխությունները նկարագրող տեղեկատվությունը հասարակությանը հասանելի է դառնում MFA ծրագրի ինտերնետային էջում և տուժած տարածքների KP հաստատություններում:

6.0 Հավելվածներ/Հղումներ

6.1 Հավելվածներ

6.1.1 Հավելված A – Տարածաշրջանային կիրառելիություն

6.1.2 Հավելված B – Տերմինների բառարան

6.2 Կցումներ

6.2.1 Կցում 1 – Հավելված Kaiser Permanente Colorado-ի համար

6.2.2 Կցում 2 – Հավելված Kaiser Permanente Georgia-ի համար

6.2.3 Կցում 3 – Հավելված Kaiser Permanente Hawaii-ի համար

6.2.4 Կցում 4 – Հավելված Kaiser Permanente Mid-Atlantic States-ի համար

6.2.5 Կցում 5 – Հավելված Kaiser Permanente Northern California-ի համար

6.2.6 Կցում 6 – Հավելված Kaiser Permanente Northwest-ի համար

6.2.7 Կցում 7 – Հավելված Kaiser Permanente Southern California-ի համար

6.2.8 Կցում 8 – Հավելված Kaiser Permanente Washington-ի համար

6.3 Այլ հղումներ

6.3.1 Հիվանդի պաշտպանության և մատչելի խնամքի ակտ, Հանրային օրենք 111-148 (124 Stat. 119 [2010])

Proprietary Information. Kaiser Permanente. All rights reserved.
Publication, duplication, disclosure or use for any purpose not expressly authorized in writing is prohibited.
Printed copies are for reference only. Please see electronic copy for latest approved version.

6.3.2 Դաշնային ռեգիստր և Դաշնային աղքատության տարեկան ուղեցույցներ

6.3.3 Ներքին եկամտահարկի ծառայության հրապարակում, 2014 հրահանգներ Ձև H համար (Ձև 990)

6.3.4 Ներքին եկամտահարկի ծառայության ծանուցում 2010-39

6.3.5 Ներքին եկամտահարկի ծառայության կոդ, 26 Դաշնային կանոնակարգերի օրենքի (Code of Federal Regulations, CFR) Մասեր 1, 53, և 602, RIN 1545-BK57, RIN 1545-BL30, RIN 1545-BL58 – Լրացուցիչ պահանջներ բարեգործական հիվանդանոցների համար

6.3.6 Կալիֆորնիայի Հիվանդանոցների ընկերակցություն, Հիվանդանոցի ֆինանսական օգնության քաղաքականություններ և Համայնքային նպաստի մասին օրենքներ, 2015թ. հրատարակություն

6.3.7 Միացյալ Նահանգների Կաթոլիկ առողջության ընկերակցություն, Համայնքային նպաստի ծրագրավորման և զեկուցման ուղեցույց, 2012թ. հրատարակություն

6.3.8 Մատակարարների ցանկեր: Մատակարարների ցանկերը հասանելի են KFHP/H կայքերում հետևյալների համար՝

6.3.8.1 Kaiser Permanente of Hawaii (www.kp.org/mfa/hawaii)

6.3.8.2 Kaiser Permanente of Northwest (www.kp.org/mfa/nw)

6.3.8.3 Kaiser Permanente of Northern California (www.kp.org/mfa/ncal)

6.3.8.4 Kaiser Permanente of Southern California (www.kp.org/mfa/scal)

6.3.8.5 Kaiser Permanente of Washington (www.kp.org/mfa/wa)

Proprietary Information. Kaiser Permanente. All rights reserved.
Publication, duplication, disclosure or use for any purpose not expressly authorized in writing is prohibited.
Printed copies are for reference only. Please see electronic copy for latest approved version.

Հավելված B – Տերմինների բառարան

Համայնքային MFA (CMFA) - Պլանավորված բժշկական ֆինանսական օգնության ծրագրեր, որոնք համագործակցում են համայնքի վրա հիմնված և անվտանգության ցանցի կազմակերպությունների հետ՝ տրամադրելու համար բժշկական տեսանկյունից անհրաժեշտ խնամք ցածր եկամուտ ունեցող չապահովագրված կամ թերի ապահովագրված հիվանդներին KP հաստատություններում:

Պարտքերի հավաքագրման գործակալություն - Անձ կամ կազմակերպություն, որն ուղղակի կամ անուղղակի գործողություններով իրականացնում կամ գործնականում հավաքագրումներ է կատարում կամ փորձում է հավաքել պարտքեր, կամ ենթադրյալ պարտքեր պարտատիրոջ կամ պարտքի գնորդի համար:

Երկարատև օգտագործման բժշկական սարքավորումներ (DME) - Ներառում են, սակայն չեն սահմանափակվում հետևյալով՝ սովորական ձեռնափայտեր, հենակներ, հեղուկացիրներ, նախատեսված շահավետության պարագաներ, դռնով քաշող միավորներ տանը օգտագործման համար, անվասայլակներ, ճոնիկներ, հիվանդանոցային մահճակալներ և թթվածին տանն օգտագործման համար՝ ինչպես նշված է DME չափանիշներում: DME-ը չի ներառում օրթոտիկները, պրոթեզները (օրինակ՝ դինամիկ բեկակալներ/օրթեզներ և արհեստական կոկորդներ և պարագաներ), ինչպես նաև ազատ վաճառքի պարագաները և փափուկ ապրանքները (օրինակ՝ ուռոլոգիական պարագաներ և վերքի խնամքի պարագաներ):

Իրավասու հիվանդ - Անձ, ով համապատասխանում է այս քաղաքականությունում նշված իրավասության պահանջներին՝ անկախ նրանից, թե արդյոք հիվանդն (1) ապահովագրված չէ, (2) ապահովագրություն է ստանում հանրային ծրագրի միջոցով (օրինակ՝ Medicare, Medicaid կամ առողջության տեղեկությունների փոխանակման միջոցով ձեռք բերված սուբսիդավորված առողջապահական խնամքի ապահովագրություն՝ առողջության ապահովագրության միջոցով), (3) ապահովագրված է KFHP-ից բացի մեկ այլ առողջապահական ծրագրի միջոցով, կամ (4) ապահովագրված է KFHP-ի միջոցով:

Արտաքին տվյալների աղբյուրներ - Երրորդ կողմի վաճառողներ են, որոնք օգտագործվում են հիվանդի անձնական տեղեկությունները վերանայելու համար՝ ֆինանսական կարիքը գնահատելու համար՝ օգտագործելով հանրային տվյալների շտեմարանների վրա հիմնված մի մոդել, որը յուրաքանչյուր հիվանդի գնահատում է նույն ստանդարտների հիման վրա՝ հիվանդի ֆինանսական կարողությունների գնահատումը հաշվարկելու նպատակով:

Դաշնային աղքատության ուղեցույցներ (FPG) - Աղքատության համար տարեկան եկամտի մակարդակներ, ինչպես հաստատված է Միացյալ Նահանգների Առողջապահության և հանրային ծառայությունների վարչության կողմից, և թարմացվում են ամեն տարի Դաշնային ռեգիստրում:

Ֆինանսական խորհրդատվություն - Գործընթաց, որն օգտագործվում է օգնելու համար հիվանդներին փնտրել տարբեր ֆինանսավորման և ապահովագրության տարբերակներ՝ KP հաստատություններում մատուցված ծառայությունների դիմաց վճարելու համար: Հիվանդները, որոնք ֆինանսական խորհրդատվության կարիք ունեն, ներառում են, սակայն չեն սահմանափակվում հետևյալով՝ ինքնուրույն վճարող, չապահովագրված, թերի ապահովագրված և նրանք, ովքեր անկարող են ամբողջությամբ վճարել հիվանդի պարտքը:

Proprietary Information. Kaiser Permanente. All rights reserved.
Publication, duplication, disclosure or use for any purpose not expressly authorized in writing is prohibited.
Printed copies are for reference only. Please see electronic copy for latest approved version.

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐՆԱԳԻՐ **Medical Financial Assistance**	ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ **NATL.CB.307**
ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ **National Community Health**	ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎԸ **1 հունվարի 2023թ**
ՓԱՍՏԱԹՂԹԻ ՏԵՐԸ **Տնօրեն, Բժշկական ֆինանսական օգնություն**	ԷՋ **26-ը՝ 30-ից**

Անօթևան – Մարդու կենսապայմանների կարգավիճակի նկարագրիչ, ինչպես նկարագրված է ստորև.

- Վայրեր, որոնք նախատեսված չեն մարդու բնակության համար, օրինակ՝ ավտոմեքենաներ, այգիներ, մայթեր, լքված շենքեր (փողոցի վրա):
- Ժամանակավոր ապաստան:
- Անօթևանների համար նախատեսված անցումային կամ աջակցող տանը, որն ի սկզբանե եկել է փողոցից կամ ժամանակավոր ապաստանից:
- Վերոհիշյալ ցանկացած վայրերում, սակայն կարճ ժամանակ (մինչև 30 հաջորդական օր) անցկացնում է հիվանդանոցում կամ այլ հիմնարկում:
- Վերջին շաբաթվա ընթացքում հեռացվել է մասնավոր բնակելի միավորից կամ փախչում է ընտանեկան բռնության իրավիճակից՝ առանց հետագա բնակության վայրի առկայության, և անձը չունի անհրաժեշտ հնարավորություններ և աջակցման ցանցեր՝ բնակության վայր գտնելու համար:
- Վերջին շաբաթվա ընթացքում դուրս է գրվել այնպիսի հիմնարկությունից, ինչպիսինն է՝ հոգեկան առողջության կամ նյութերի չարաշահումից բուժման հաստատությունը, որտեղ անձը բնակվել է 30 հաջորդական օրից ավելին և առանց հետագա բնակության վայրի առկայության, և անձը չունի անհրաժեշտ հնարավորություններ և աջակցման ցանցեր՝ բնակության վայր գտնելու համար:

KP - Ներառում է Kaiser Foundation Hospitals և հիվանդանոցին կից գործող կլինիկաներ, Kaiser Foundation Health Plans, Permanente Medical Groups և դրանց համապատասխան մասնաճյուղերը, բացառությամբ Kaiser Permanente Insurance Company (KPIC):

KP հաստատություններ - Ցանկացած ֆիզիկական տարածքներ, ներառյալ՝ շենքի ներքին և արտաքին մասեր, որոնք պատկանում են կամ վարձակալվում են KP-ի կողմից՝ իրականացնելու համար KP-ի բիզնես գործառույթները, ներառյալ՝ հիվանդին խնամքի մատակարարում (օրինակ՝ շենք կամ KP հարկաբաժին, բաժանմունք, կամ ոչ KP շենքի ներքին և արտաքին տարածքներ):

Միջոցների ստուգում - Մեթոդ, որի միջոցով արտաքին տվյալների աղբյուրները կամ հիվանդի կողմից տրամադրված տեղեկություններն օգտագործվում են պարզելու համար իրավասությունը հանրային ապահովագրության ծրագրի կամ MFA-ի համար՝ հիմնվելով այն փաստի վրա, թե արդյոք անձի տնային տնտեսության եկամուտն ավելի մեծ է, քան Դաշնային աղքատության ուղեցույցների հատուկ նշված տոկոսը:

Բժշկական ֆինանսական օգնություն (MFA) - Ծրագիր, որը տրամադրում է պարզև բժշկական ծախսերի վճարման համար այն իրավասու հիվանդներին, ովքեր ի վիճակի չեն վճարելու բժշկական տեսանկյունից անհրաժեշտ ծառայությունների ամբողջ արժեքը կամ դրա մի մասը, և ովքեր այլևս չունեն հանրային և մասնավոր վճարման աղբյուրներ: Անհատները պետք է համապատասխանեն ծրագրի չափանիշներին, որպեսզի օգնություն ստանան հիվանդի խնամքի արժեքի մի մասը կամ դրա ամբողջ գումարը վճարելու համար:

Բժշկական պարագաներ - Կրկին չօգտագործվող բժշկական նյութեր, օրինակ՝ բեկակալները, ուսակապերը, վիրակապերը և բանդաժները, որոնք դրվում են առողջապահական խնամքի

Proprietary Information. Kaiser Permanente. All rights reserved.
Publication, duplication, disclosure or use for any purpose not expressly authorized in writing is prohibited.
Printed copies are for reference only. Please see electronic copy for latest approved version.

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐՆԱԳԻՐ **Medical Financial Assistance**	ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ **NATL.CB.307**
ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ **National Community Health**	ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎԸ **1 հունվարի 2023թ**
ՓԱՍՏԱԹՂԹԻ ՏԵՐԸ **Տնօրեն, Բժշկական ֆինանսական օգնություն**	ԷՋ **27**-ը՝ **30**-ից

լիցենզավորված մասնագետի կողմից՝ բժշկական տեսանկյունից անհրաժեշտ ծառայություններ մատուցելիս, և չեն ներառում այն նյութերը, որոնք հիվանդը գնել կամ ձեռք է բերել այլ աղբյուրից:

Հիվանդի ծախս - Հիվանդի՝ KP-ի հաստատություններում (օրինակ՝ հիվանդանոցներ, հիվանդանոցներին կից կլինիկաներ, բժշկական կենտրոններ, բժշկական գրասենյակային շենքեր և ամբուլատոր դեղատներ) ստացված խնամքի համար գանձվող վճարների այն մասը, որոնք չեն հատուցվում ապահովագրության կամ պետականորեն ֆինանսավորվող առողջապահական ծրագրի կողմից:

Դեղատան վճարի չեղարկում - Տրամադրում է ֆինանսական օգնություն ցածր եկամուտ ունեցող KP Senior Advantage Medicare Մաս D անդամներին, ովքեր ի վիճակի չեն վճարելու Medicare Մաս D-ով ապահովագրված ամբուլատոր դեղատոմսով դեղերի ծախսերի իրենց մասնաբաժինը:

Անվտանգության ցանց - Շահույթ չհետապնդող կազմակերպությունների և/կամ պետական գործակալությունների համակարգ, որը չապահովագրվածներին և պատշաճ ծառայություններ չստացածներին տրամադրում է անմիջական առողջապահական խնամքի ծառայություններ համայնքի շրջանակներում, օրինակ՝ հանրային հիվանդանոցում, համայնքային կլինիկայում, եկեղեցում, անօթևանների ապաստանում, շարժական առողջապահական բաժանմունքում, դպրոցում և այլն:

Թերի ապահովագրված - Անձ է, ով, չնայած, որ ունի ապահովագրություն, գտնում է, որ ապահովագրության ապահովագների, համավճարների, համաապահովագրության և չհատուցվող գումարների վճարման պարտավորություններն այնքան էական ֆինանսական բեռ է, որ հիվանդը հետաձգում է կամ չի ստանում անհրաժեշտ առողջապահական ծառայություններն իր գրպանից վճարվող ծախսերի պատճառով:

Չապահովագրված - Անձ է, ով չունի առողջապահական ապահովագրություն կամ դաշնային կամ նահանգային հովանավորվող ֆինանսական օժանդակություն՝ օգնելու համար վճարել առողջապահական խնամքի ծառայությունների համար:

Խոցելի բնակչություն - Ժողովրդագրական խմբեր, որոնց առողջությունը և բարեկեցությունը համարվում է ավելի ռիսկային, քան հիմնական բնակչությանը՝ նրանց սոցիալ-տնտեսական կարգավիճակի, հիվանդության, էթնիկ պատկանելիության, տարիքի կամ այլ հաշմանդամության գործոնների պատճառով:

Դատարան բերման ենթարկում - Դատարանի կողմից նախաձեռնված գործընթաց է, որը հրամայում է իշխանություններին քաղաքացիական անարգանք ցույց տված անձին բերել դատարան, ինչը նման է ձերբակալման հրամանին:

Proprietary Information. Kaiser Permanente. All rights reserved.
Publication, duplication, disclosure or use for any purpose not expressly authorized in writing is prohibited.
Printed copies are for reference only. Please see electronic copy for latest approved version.

ՀԱՎԵԼՎԱԾ. **Kaiser Permanente Northern California**

ՀԱՎԵԼՎԱԾԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎԸ. **հունիսի 1, 2023**

I. **Kaiser Foundation Hospitals**: Այս քաղաքականությունը վերաբերում է KFHP/H բոլոր հաստատություններին (օրինակ՝ հիվանդանոցներ, հիվանդանոցներին կից կլինիկաներ, բժշկական կենտրոններ և բժշկական գրասենյակային շենքեր) և ամբուլատոր դեղատներին: Հյուսիսային California-ի Kaiser Foundation Hospitals-ը ներառում է՝

KFH Antioch	KFH Richmond	KFH San Rafael
KFH Fremont	KFH Roseville	KFH Santa Rosa
KFH Fresno	KFH Redwood City	KFH South Sacramento
KFH San Leandro	KFH Sacramento	KFH South San Francisco
KFH Manteca	KFH Santa Clara	KFH Vacaville
KFH Modesto	KFH San Francisco	KFH Vallejo
KFH Oakland	KFH San Jose	KFH Walnut Creek

Ծանոթություն. Kaiser Foundation Hospitals-ը ենթարկվում է Հիվանդանոցային արդար գնագոյացման քաղաքականությունը, California-ի Առողջապահության և անվտանգության մասին օրենք §127400:

II. **Լրացուցիչ ծառայություններ, որոնք իրավասու են և իրավասու չեն՝ համաձայն MFA քաղաքականության:**

a. **Լրացուցիչ իրավասու ծառայություններ:**

i. **Անօթևան հիվանդների փոխադրում**: Փոխադրումը մատչելի է անօթևան հիվանդների համար շտապ և ոչ շտապ օգնություն պահանջող իրավիճակներում՝ KP հիվանդանոցներից կամ KP շտապ օգնության բաժանմունքներից դուրսգրումը հեշտացնելու համար:

b. **Լրացուցիչ ոչ իրավասու ծառայություններ**

i. Լսողական սարքեր

ii. Օպտիկական պարագաներ

III. **Մատակարարներ, որոնք ենթարկվում են կամ չեն ենթարկվում MFA քաղաքականությանը:** Kaiser Foundation Hospitals-ի մատակարարների ցանկը, որոնք ենթարկվում կամ չեն ենթարկվում MFA քաղաքականությանը, անվճար հասանելի է հանրությանը KFHP/H MFA կայքում՝ www.kp.org/mfa/ncal հասցեով:

IV. **Ծրագրի վերաբերյալ տեղեկություններ և MFA-ի համար դիմելը:** MFA ծրագրի վերաբերյալ տեղեկությունները, ներառյալ՝ MFA քաղաքականության, դիմումի ձևաթղթերի, հրահանգների և պարզ լեզվով գրված ամփոփումների (օրինակ՝ ծրագրի բրոշյուրներ) պատճեններն անվճար հասանելի են հանրությանն էլեկտրոնային ձևաչափով կամ թղթե տարբերակով: Հիվանդը կարող է դիմել MFA-ի համար KFHP/H-ից խնամք ստանալու ընթացքում կամ դրանից հետո մի քանի եղանակներով, ներառյալ՝ առցանց, անձամբ, հեռախոսով կամ թղթե դիմումով: (Տե՛ս քաղաքականության Բաժիններ 5.3 և 5.4):

Proprietary Information. Kaiser Permanente. All rights reserved.
Publication, duplication, disclosure or use for any purpose not expressly authorized in writing is prohibited.
Printed copies are for reference only. Please see electronic copy for latest approved version.

a. **Առցանց լրացրեք և ներկայացրեք դիմումը KFHP/H կայքում:** Հիվանդը կարող է ձեռնարկել և ներկայացնել դիմումի տեղեկությունները էլեկտրոնային տարբերակով՝ MFA կայքի միջոցով՝ www.kp.org/mfa/ncal:

b. **Ներբեռնեք ծրագրի վերաբերյալ տեղեկությունները KFHP/H կայքից:** Ծրագրի մասին տեղեկությունների էլեկտրոնային պատճենները հասանելի են MFA-ի կայքում՝ www.kp.org/mfa/ncal հասցեով:

c. **Խնդրեք ծրագրի մասին տեղեկություններ էլեկտրոնային տարբերակով:** Ծրագրի մասին տեղեկությունների էլեկտրոնային պատճենները հասանելի են էլ. փոստով՝ ըստ պահանջի MFA-Public-Inbox@kp.org հասցեով:

d. **Ձեռք բերեք ծրագրի մասին տեղեկություններ կամ անձամբ դիմեք:** Ծրագրի մասին տեղեկությունները հասանելի են Ընդունման, Շտապ օգնության և Հիվանդի ֆինանսական խորհրդատուների բաժիններում այն Kaiser Foundation Hospitals-ում, որոնք նշված են Բաժին I-ում՝ *Kaiser Foundation Hospitals:*

e. **Խնդրեք ծրագրի մասին տեղեկություններ կամ հեռախոսով դիմեք:** Խորհրդատուները հասանելի են հեռախոսով՝ տեղեկություններ տրամադրելու, MFA-ին ձեր իրավասությունը որոշելու և հիվանդին MFA-ի համար դիմելու հարցում աջակցելու համար: Խորհրդատուներին կարելի է զանգահարել՝

   Հեռախոսահամար՝ 1-800-390-3507

f. **Խնդրեք ծրագրի մասին տեղեկություններ կամ փոստով դիմեք:** Հիվանդը կարող է խնդրել ծրագրի մասին տեղեկություններ և դիմել MFA-ի համար՝ փոստով ուղարկելով լրացված MFA ծրագրի դիմումը: Տեղեկության խնդրանքները և դիմումները կարելի է փոստով ուղարկել հետևյալ հասցեով՝

   Kaiser Permanente
   Attention: Medical Financial Assistance Unit
   P.O. Box 30006
   Walnut Creek, California 94598

g. **Անձամբ ներկայացրեք լրացված դիմումը:** Լրացված դիմումները կարելի է անձամբ բերել Ընդունման կամ Հիվանդի ֆինանսական խորհրդատուների բաժիններ՝ ցանկացած Kaiser Foundation Hospital-ում:

V. **Իրավասության չափանիշներ:** Հիվանդի ընտանեկան եկամուտը նկատի է առնվում, երբ որոշվում է նրա իրավասությունը MFA-ի համար: (Տե՛ս քաղաքականության Բաժիններ 5.5.1):

a. Միջոցների ստուգման չափանիշներ. Դաշնային աղքատության ուղեցույցների մինչև 400%:

VI. **Ձեղչի ժամանակացույց:** Գումարները, որոնք KP-ն զանձում է այն հիվանդից, որը որակավորում է բժշկական ֆինանսական օգնության համար, հիմնված է այն իրավասության չափանիշների տեսակի վրա, որոնք օգտագործվում են ծրագրին հիվանդին որակավորելու համար:

a. **Հիվանդը համապատասխանում է միջոցների ստուգման չափանիշներին:** Հիվանդը, որը համապատասխանում է միջոցների ստուգման չափանիշներին կստանա հիվանդի ծախսերի լոգարիթմական սանդղակով հաշվարկվող զեղչ կամ հիվանդի պատասխանատվությունը հանդիսացող KP ծառայությունների արժեքի մի մասի զեղչ:

Proprietary Information. Kaiser Permanente. All rights reserved.
Publication, duplication, disclosure or use for any purpose not expressly authorized in writing is prohibited.
Printed copies are for reference only. Please see electronic copy for latest approved version.

Զեղչի գումարը որոշվում է՝ հիմնվելով այն բանի վրա, թե հիվանդի ընտանիքի եկամուտը որտեղ է գտնվում Աղքատության դաշնային մակարդակի (Federal Poverty Level, FPL) ուղեցույցներում՝ հետևյալ կերպ.

Աղքատության դաշնային մակարդակի ուղեցույցներ		Ֆինանսական աջակցության զեղչ
Սկսած	Մինչև	
0% - 200%		100% զեղչ
201% - 400%		50% զեղչ

Եթե տրվում է մասնակի զեղչ (100%-ից պակաս), մնացորդը պահանջվում է ամբողջությամբ վճարել կամ հիվանդը հնարավորություն ունի ստեղծելու անտոկոս վճարման պլան:

VII. **Ընդհանրապես գանձվող գումարները (AGB) հաշվարկելու հիմքեր:** KFHP/H որոշում է AGB-ը ցանկացած շտապ օգնության կամ բժշկական տեսանկյունից այլ անհրաժեշտ խնամքի համար՝ օգտագործելով հետադարձի մեթոդը՝ բազմապատկելով խնամքի համար համախառն գանձված գումարը AGB տոկոսադրույքով: AGB տոկոսադրույքի և հաշվարկների վերաբերյալ տեղեկությունները հասանելի են KFHP/H MFA կայքում՝ www.kp.org/mfa/ncal հասցեով:

VIII. **Փոխհատուցումներ** Այն դեպքերում, երբ KP-ն սխալմամբ վճարում է հավաքագրել հիվանդից իր ակտիվ MFA պարգևի տևողության ընթացքում, փոխհատուցում կսկսվի հիվանդի վճարած ցանկացած գումարի համար, որը պետք է ծածկվեր ակտիվ MFA պարգևով:

a. Տոկոսները պետք է կուտակվեն այն տոկոսադրույքով, որը նշված է Քաղաքացիական դատավարության օրենսգրքի Բաժին 685.010-ում՝ սկսած այն ամսաթվից, երբ հիվանդանոցը ստացել է հիվանդի վճարումը: Ներկայիս տոկոսադրույքը կազմում է 10%:

Proprietary Information. Kaiser Permanente. All rights reserved.
Publication, duplication, disclosure or use for any purpose not expressly authorized in writing is prohibited.
Printed copies are for reference only. Please see electronic copy for latest approved version.